



Հաստատում եմ
ԵՊՀ-ի ռեկտոր՝
Գ. Գասպարյան
«30» 10 2012 թ.

**Երևանի պետական լեզվաբանական համալսարանի
«Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների
կենտրոնի»
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևանի պետական լեզվաբանական համալսարանի (ԵՊՀ) «Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների (ՀՈՒՆ) կենտրոնը» (այսուհետ՝ Կենտրոն) ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրության, ԵՊՀ-ի և սույն կանոնադրության համաձայն:

2. Կենտրոնի նպատակը

2.1. Կենտրոնի ստեղծման նպատակը ԵՊՀ-ում քաղաքագիտական ուղղվածություն ունեցող գիտակրթական համալիրի ձևավորումն է՝ ԵՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի (հետագայում՝ Ամբիոն) հետ սերտ համագործակցությամբ: Այդ նպատակի իրագործման համար Կենտրոնը կիրականացնի գիտական ծրագրեր՝ ներգրավելով համապատասխան ներուժ ունեցող գիտնականների ինչպես Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից, այնպես էլ այդ ասպարեզում աչքի ընկնող այլ գիտնականների հայաստանյան այլ հաստատություններից և արտերկրից:

3. Կենտրոնի խնդիրները

3.1. Կենտրոնի խնդիրներն են

- քաղաքագիտության ասպարեզում միջազգային բարձր մակարդակի բարձրագույն կրթություն և գիտական ուսումնասիրություններ ապահովող համալսարանական գիտակրթական միջուկի ձևավորումը,
- ակտիվ և բարձրորակ գիտական գործունեության ծավալումը,
- փորձագիտական կարծիքի տրամադրումը պետական հաստատություններին և բաժանորդներին,
- մասնավոր խնդիրների լուծումների վերաբերյալ վերլուծական խորհրդատվության տրամադրումը,
- քաղաքագիտական խնդիրների վերաբերյալ մասնագիտական կարծիքի և նոր գաղափարների ձևավորման միջավայրի ստեղծումը:

4. Կենտրոնի կառավարումը

4.1. Կենտրոնը հաշվետու է ԵՊԼՀ ռեկտորին և ռեկտորատին: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնն իր գործունեության վերաբերյալ կարող է զեկուցումներ ներկայացնել ԵՊԼՀ գիտական խորհրդին:

4.2. Կենտրոնի անմիջական ղեկավարումն իրականացնում են Կենտրոնի գործադիր ղեկավարը (տնօրենը)՝ կազմակերպական, ինչպես նաև արտաքին կապերի հաստատման ու զարգացման հարցերով, և գիտական ղեկավարը՝ գիտական ծրագրերին վերաբերող մասնագիտական հարցերով:

4.3. Կենտրոնի գործադիր ղեկավարը

- ներկայացնում է Կենտրոնի կանոնադրությունը (հետագայում՝ դրանում կատարվող փոփոխությունների նախագիծը) և գործունեության ակնկալվող արդյունքները,
- ներկայացնում է առաջարկություններ Կենտրոնի աշխատակազմի և դրա փոփոխությունների, ինչպես նաև կոնկրետ ծրագրի իրականացման նպատակով Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից կամ այլ հաստատություններից ու կառույցներից ներգրավվող գիտնականների վերաբերյալ,
- ներկայացնում է տարեկան գործունեության և ֆինանսական հաշվետվությունները,
- սպահովում է Կենտրոնի համագործակցությունը համալսարանների ու գիտական հաստատությունների, ՀՀ պետական կառավարման և այլ մարմինների ու հաստատությունների հետ,
- հաստատում է Կենտրոնի միջազգային **համագործակցությունը**,
- իրականացնում է կենտրոնի աշխատակազմի գործունեության ղեկավարումը,
- իրականացնում է Կենտրոն-Ամբիոն անմիջական կապը,
- իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊԼՀ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ չարգելվող այլ գործունեություն:

4.4. Կենտրոնի գիտական ղեկավարը՝

- իրականացնում է կենտրոնի գիտական ղեկավարումը,
- մասնագիտական, իսկ կենտրոնի գործադիր ղեկավարի համաձայնությամբ նաև այլ կառույցներում ներկայացնում է Կենտրոնը,
- ղեկավարում է Կենտրոնի գիտական խորհուրդը,
- մինչ Կենտրոնի գիտական խորհրդի ձևավորումը որոշումներ է ընդունում Կենտրոնի գործունեության հիմքը հանդրասցող քաղաքագիտական հիմնախնդիրների (տես սույն կանոնադրության 5.1. կետը) լուծման ուղղությամբ գիտական ծրագրերի իրականացման առաջնահերթությունների վերաբերյալ:

5. Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն ու ակնկալվող արդյունքները

5.1. Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները ներառում են Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն ունեցող հետևյալ քաղաքագիտական հիմնախնդիրները՝

- հակամարտությունների կարգավորում (Դարաբաղյան հակամարտություն),
- հաշտեցման գործընթացները միջազգային հարաբերություններում (հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում),
- ազգային ինքնության արդիականացման և միջազգային ինտեգրման ներդաշնակեցման խնդիրը (հայության քաղաքակրթական տեղը),

- Հայրենիք-սիյուռք փոխշահավետ հարաբերությունների կառուցման հնարավորություններն ու դժվարությունները (Հայաստանի դեպքը և եվրոպական երկրների փորձը),
- հետխոհրդային տրանսֆորմացիա,
- ժողովրդավարության և մարդու իրավունքների զարգացումների առանձնահատկությունները հետխոհրդային տրանսֆորմացիայում,
- Հարավային Կովկասը աշխարհաքաղաքական մրցակցությունում:

5.2. Կենտրոնի գործունեության սպասվող հիմնական արդյունքները պետք է լինեն կոնկրետ և վերահսկելի: Կենտրոնի գործունեության առաջին հինգ տարիների համար դրանք ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

| Արդյունք | Ուսումնական տարի | | | | |
|---|------------------|--------------|---------------|--------------|-------------|
| | I.2012-2013 | II.2013-2014 | III.2014-2015 | IV.2015-2016 | V.2016-2017 |
| ա) մենագրությունների հրատարակում | | | | | |
| -Հայաստանում, | 1 | 1 | 2 | 2 | 3 |
| -այլ երկրներում: | | 1 | 1 | 2 | 2 |
| բ) հոդվածների հրապարակում` | | | | | |
| -Հայաստանում, | 6 | 8 | 8 | 10 | 10 |
| -միջազգային, | 4 | 4 | 6 | 8 | 10 |
| այդ թվում` գրախոսվող հանդեսներում: | 2 | 2 | 4 | 6 | 8 |
| գ) ԵՊԼՀ բանբերի քաղաքագիտ. թողարկ. հրատարակում | + | + | + | + | + |
| դ) միջազգային գրախոսվող հանդեսի հրատարակում | | + | + | + | + |
| ե) տարեկան զեկույցների պատրաստում | + | + | + | + | + |
| զ) կոնֆերանսների անցկացում` - | | | | | |
| -միջազգային, | | + | | + | |
| - հայաստանյան: | + | | + | + | + |
| է) սեմինարների անցկացում | 2 | 3 | 4 | 5 | 5 |
| - ներքին, | | | 2 | 3 | 3 |
| - համահայաստանյան: | | | 2 | 2 | 2 |
| ը) թեմատիկ զեկույցներ` ըստ պատվերի: | + | + | + | + | + |

6. Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ միջոցների և պայմանների ապահովումը

6.1. Օրենսդրությամբ, ԵՊԼՀ-ի և սույն կանոնադրությամբ Կենտրոնին վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տարածքն ու աշխատանքային պայմաններն ապահովում է ԵՊԼՀ-ն:

6.2. Կենտրոնի գործունեության անհրաժեշտ ֆինանսական միջոցները հիմնականում ապահովվում են Կենտրոնի մշակած ծրագրերի համար պետական բյուջեից կամ այլ

աղբյուրներից համապատասխան ծրագիր-հայտերի հիման վրա ստացված հատկացումները: Կենտրոնի գործունեության ֆինանսական ապահովման նպատակով յգտագործվում են նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց նպատակային հատկացումները:

6.3. Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար ԵՊԼՀ-ն, ռեկտորատի որոշմամբ, ապահովում է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

6.4. Կենտրոնի կառուցվածքը կախված է իրականացվող ծրագրերի ծավալից ու բնույթից և կենտրոնի գործադիր ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ԵՊԼՀ ռեկտորը:

6.5. Կենտրոնի աշխատակիցների վարձատրությունը կատարվում է ըստ իրականացվող ծրագրերի նախահաշիվների կամ Կենտրոնի գործադիր տնօրենի առաջարկության:

Հիմք՝ հաստատված է 26.10.2012թ-ի գիտխորհրդի N2 նիստի որոշմամբ: